

ԱՂՕԹԵՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Անոնք, որ մեղքերով ծանրաբեռնուած են, վիշտերով ճնշուած, թշնամիներէն տանջուած եւ ցաւերով չարչարուած, պէտք է որ աղօթեն եւ աղերսեն: Որովհետեւ անոնք, որ անկեղծ հոգիով եւ անկեղծ հաւատքով կ'աղօթեն ու բարին կը խնդրեն Աստուծմէ, իրենց բոլոր խնդրանքները կը կատարուին, ինչպէս կատարուեցաւ մեր առաջին հայրերու պարագային: Բայց եթէ մէկը ըսէ. «Խնդրեցի եւ աղօթեցի, բայց դարձեալ չստացայ»: Կը նշանակէ, թէ թախանձանքով չէ աղօթած, ինչպէս այրի կիւր անիրաւ դատաւորէն խնդրեց եւ ստացաւ կամ մման այն բարեկամին, որ գիշերով իր դրացիէն քանի մը նկանակ խնդրեց ու ստացաւ, ոչ թէ իր բարեկամութեան, այլ՝ թախանձանքին համար: Նոյնպէս Աննան, ցաւագին հոգիով մը, ինչպէս մատի արտասուքով եւ աղօթքով ձեռք ձգեց Սամուէլը, իսկ տխրութեան ձորին մէջ Աստուծոյ լացող մարդիկը իրենց ջերմեռանդ աղօթքներուն եւ պաղատանքներուն համար Աստուծոյ կողմէ Գեղէնը ունեցան, որ ազատեց Իսրայէլը: Դուն ալ, եթէ այսպիսի արցունքներով եւ ամբողջական սրբտով աղօթես Աստուծոյ ու չերկմտիս, Ան խնդրանքդ պիտի ընդունի:

ՃԱՌԵՐ ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

ՇԱՐԱԿԱՆ

Շարականը շարերու (երգերու) հաւաքածոյ մըն է, որ կը բովանդակէ Տէրունի օրերու, Սրբոց յիշատակներու եւ Պահոց օրերու նուիրուած եկեղեցական երգեր:

Հայ եկեղեցւոյ մէջ երգուած շարականները գրուած են ուրբ ձայներու համաձայն եւ ունին 8 տեսակ, հետեւեալ անուններով. Օրհնութիւն, Հարց, Մեծացուցէ, Ողորմեա, Տէր Յերկնից, Մանկունիք, Ճաշու, Համբարձի:


Ներսէս Շինող կաթողիկոս (Է. դար) Վարդավառի տօնին, լսելէ վերջ հարց շարականներու անկանոնութիւնը, պարտականութիւն տուած է ձոն Բարսեղ վարդապետին, որպէսզի կարգ ու կանոն դնէ շարականներուն:

Հեղինակներու մասին առաջին անգամ Գրիգոր Տաթեւացի ցանկ մը պատրաստած է, «Որք գծորանս Հոգւոյն արբին» սկսուածով, բայց վաւերական չէ նկատուած (տե՛ս ԳԻՐԲ ՀԱՐՑՄԱՆՑ, երես 637ա-638ա):

Շարականներու հեղինակները նկատուի կ'ունենանք դար առ դար:

1.- Հինգերորդ դարու մէջ գրուած շարականներուն թիւը քիչ է եւ անորոշ: Հինգերորդ դարու շարականներու հեղինակ նկատուած են Ս. Սահակ, Ս. Մեսրոպ, Յովհաննէս Մանդակունի:

2.- Եօթներորդ դարուն մէջ Կոմիտաս կաթողիկոս, որ խմբագրած է Հոփսիմեանց «Անձինք Նուիրեալք»-ը, այբուբենական կարգով: Սահակ Զործփորեցի կաթողիկոսին կը վերագրուին Նաւակատեաց, Խաչի ութօրէից, Վարդավառի եւ Գիւտ Խաչի կանոնները:



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՀ.119.105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 22 ՄԱՅԻՍ 2022

ԹԻՒ 21

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Գրծ. 20.17-38: Ա. Յհ. 3.2-6: Յհ. 9.39-10.10

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍ 9.39-10.10

Յիսուս ըսաւ. «Աշխարհ եկայ յայտնելու, թէ որո՞նք են կոյրերը եւ որոնք՝ տեսնողները. որպէսզի կոյրերը տեսնեն եւ անոնք՝ որ կը տեսնեն՝ կոյրնան»:

Փարիսեցիներէն ոմանք, որոնք իր շուրջն էին, լսեցին ասիկա եւ հարցուցին. «Արդեօք մե՞նք ալ կոյր ենք»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Եթէ կոյր ըլլայիք, մեղք պիտի չունենայիք. բայց քանի կ'ըսէք, թէ կը տեսնէք կը նշանակէ՝ թէ ձեր մեղաւոր ըլլալը կը հաստատուէ: Հաստատ գիտցէք, ան, որ ոչխարներուն փարախը դռնէն չի մտներ, այլ՝ ուրիշ տեղէ կը մագլցի, անիկա գող է եւ աւազակ, իսկ ան, որ դռնէն կը մտնէ՝ անիկա ոչխարներուն հովին է: Դռնապանը դուռը կը բանայ անոր եւ ոչխարները իր ձայնին կը հետեւին: Իրենց անուններով կը կանչէ իր ոչխարները եւ դուրս կը տանի զանոնք: Եւ երբ իր ոչխարները դուրս կը հանէ, ինք կ'առաջնորդէ եւ ոչխարները կը հետեւին իրեն, որովհետեւ իր ձայնը կը ճանչնան: Օտարին չեն հետեւիր. ընդհակառակը, կը փախչին անկէ, որովհետեւ օտարներու ձայնը չեն ճանչնար»:

Յիսուս այս առակը խօսեցաւ անոնց, սակայն անոնք չհասկցան թէ ի՞նչ ըսել կ'ուզէր իրենց: Ուստի Յիսուս կրկին ըսաւ անոնց. «Հաստատ գիտցէք, թէ ես եմ ոչխարներուն դուռը: Բողոր անոնք, որոնք ինձմէ առաջ եկան, գող էին եւ աւազակ. բայց ոչխարները անոնց չհետեւեցան: Ես եմ դուռը: Ով, որ ինձմէ անցնելով ներս մտնէ՝ պիտի փրկուի, պիտի մտնէ եւ ելլէ եւ ճարակ գտնէ: Գողը կու գայ միայն գողնալու, սպաննելու եւ փճացնելու համար: Ես եկայ, որպէսզի կեանք ունենան եւ լեցուն կեանք ունենան»:

Յովհաննէս Աւետարանիչը բաղդատութիւն մը կ'ընէ Բարի Հովին ու վարձկանին, հարազատին եւ օտարին, անկեղծին ու ստախօսին միջեւ: Առաջինը՝ բարի է, իսկ երկրորդը՝ չար: Առաջինը ոչխարները արածողն է, անոնք իրենիներն են, անոնց հովին է: Ան՝ փարախի դռնէն կը մտնէ, կը ճանչնայ ոչխարները, ոչխարներն ալ կը հետեւին՝ Ասոր, ո՛ր որ ուզէ եւ կեանք կու տայ անոնց դալար արտերուն մէջ: Երկրորդ անձնաւորութիւնը գող է եւ աւազակ, դռնէն չի մտներ, այլ պատէն մագլցելով՝ գողունի փարախ կը մտնէ՝ կը սպաննէ ու ջարդ ու փշուր կ'ընէ, օտարական մըն է ան ոչխարներուն համար, անոնք փախուստ կու տան իրմէ:

**ՀԱՄԲԱՐՁՈՒՄ**

Քրիստոս իր հրաշափառ յարութեանէն 40 օր ետք երեւցաւ իր աշակերտներուն՝ անոնց հետ խօսելով Աստուծոյ արքայութեան մասին:

Քառասուններորդ օրը Յիսուս պաւլոսի հետ աշակերտներուն ներսադէմ մնալ մինչեւ Պենտեկոստէի օրը, երբ Ս. Հոգին պիտի իջնէ երկինքէն եւ բնակի անոնց մէջ:

Այնուհետեւ իր աշակերտներուն հետ Քրիստոս Զիթենաց լեռը բարձրացաւ, ուր օրհնեց գանձնք: Եւ երբ կ'օրհնէր երկինք բարձրացաւ բոլորին աչքին առջեւ: Երբ տակաւին առաքելները իրենց աչքերը երկինք յարած՝ Յիսուսի մեկնիլը կը դիտէին, ահա երկու սպիտակագգետ մարդիկ երեւցան անոնց եւ ըսին.

—Ո՛վ Գալիլիացիներ, ինչո՞ւ կեցեր երկինքը կը դիտէք: Այս Յիսուսը, որ երկինք համբարձաւ, օր մը դարձաւ պիտի գայ այնպէս՝ ինչպէս անոր երկինք երթալը տեսաք:

Քրիստոս համբարձաւ, որպէսզի երկինքը երկրին միաւորէ եւ աստուածացնէ ու փառաւորէ մարդկային բնութիւնը:

Ան երկինք ելաւ եւ նստաւ Հօրը աջ կողմը առանց լքելու իր սիրելի առաքելները եւ բոլոր անոնք, որոնք կը հաւատան եւ կը սիրեն զինք:

Յիսուս ըսաւ.

**«Ես ձեզի հետ եմ, մինչեւ աշխարհի վերջը»:**

ՈՍԿԵՂԵՆ ՀԱՍԱՐ

**«Զօրացի՛ր ու քա՛ջ եղի՛ր: Մի՛ վախճար բնաւ եւ մի՛ վարանիր, որովհետեւ ես՝ քու Տէր Աստուածդ, քու հետդ եմ ո՛ւր որ ալ երթաս» (Յեսու 1.9):**

**Ո՛Վ Ե ՍԱՐԴԸ**

Մարդը Աստուծոյ հողեղէն արարածն է, որ ստեղծուած է իր Արարիչին պատկերովը եւ պսակուած է փառքով ու պատուով, կարգըւած է իշխան՝ տիրելու համար երկրի վրայ ապրող բոլոր արարածներուն (Ծննդ. Ա. 26): Մարդը Աստուծոյ պատկերն ու փառքն է (Ա. Կորթ. 11.7):

**ԻՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԵ «ՍԱՐԴԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՏԿԵՐՆ Է»:**

Վերոյիշեալ խօսքը կը նշանակէ, թէ մարդ իր ներսիդին ունի Աստուծոյ էութեան ներկայութիւնը, որովհետեւ ան հողեղէն արարած ըլլալով հանդերձ իր մէջ ընդունած է Աստուծոյ կենդանի շունչը եւ անմահ է հոգիով (Ծննդ.2:7): Հետեւաբար մարդը կը տարբերի երկրի վրայ ապրող միւս արարածներէն՝ իր կենդանի հոգիով, ազատ կամքով, բանականութեամբ, իմացականութեամբ եւ իր Արարիչին հետ յարաբերելու ձգտումով:

**ԻՆՉՈ՞Ւ ԳԱՍԱՐ «ՍԱՐԴԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌՔՆ Է»:**

Որովհետեւ մարդ արարածը իր Արարիչին մեծութեան պատիւ բերող նշանը, փայլը եւ շուքն է՝ որպէս լրումն ու պսակը տիեզերքի ստեղծագործութեան:

Ամբացո՛ւր զիս Քու երկիւղովդ, Տէ՛ր, գորացո՛ւր տկարս Քու գորութեամբդ, առողջացո՛ւր հոգիս հիւանդութիւնը, բժշկէ՛ մարմինիս ցաւերը եւ հաստատէ՛ սրտիս մէջ սիրոյդ ջերմութիւնը, որ չարչարակից ըլլամ Քու սուրբերուդ:

Եփրեմ Ասորի

**ՏԵՂՔԱՅՆ ԶՐՆԵՆՔ ՄԵՐ**

**ՀԱՄԱՔԻՆ ՄԷՋ**

Տեղքայլ շրնենք հաւատքի մեր կեանքին մէջ: «Մինչեւ ե՛րբ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ ե՛րբ պիտի հանդուրժեմ ձեզի»: Յիսուս մնայուն կերպով Օրէնքի ուսուցիչներուն հետ էր, մնայուն կերպով կ'ուսուցանէր ժողովարաններուն մէջ, մնայուն կերպով կը բացատրէր Աստուծոյ օրէնքները, եւ մանաւանդ, մնայուն կերպով կը բժշկէր եւ կ'ազատագրէր: Հակառակ այս բոլորին, շուրջը գտնուող մարդիկը, յատկապէս Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները, չէին կրցած օգտուիլ իրմէ, չէին յաջողած գորանալ ու բարձրանալ իրմով, եւ ասիկա կը բարկացնէր Յիսուսը, կ'անհանգստացնէր զինք, որովհետեւ Յիսուս կ'ուզէր տեսնել զիրենք յառաջացած, իրենց հաւատքին մէջ աճած, հասուն եւ քաջ հաւատացեալներ դարձած:

**ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ**

**ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍԸ**

Միբելիներ, Յիսուս անհանգիստ կ'ըլլայ, երբ կը տեսնէ, որ իր հետեւորդները տեղքայլ կ'ընեն իրենց հաւատքի կեանքին մէջ: Այսօր որքա՛ն մարդիկ կան որոնք «Միշտ Յիսուսի հետ են», միշտ իր մասին կը խօսին, եւ սակայն, տկար հաւատացեալներ են, Չարին դիմաց անկարող մարդիկ են:

Ո՛վ ՏԵՐ, մեր ՏԵՐԸ,  
ի՛նչ փառահեղ է անունդ ամբողջ աշխարհի վրայ:

Փառքդ անլի բարձր է քան՝ երկինքը, բայց դուն մանուկներուն ու ծծկեր երեխաներուն բերնով գովեստդ հիւսեցիր քեզի հակառակորդներուն դիմաց, որպէսզի լռութեան մատնես թշնամիներդ եւ հակառակորդներդ: Երբ կը դիտեմ երկինքդ, մատներուդ գործը, կը դիտեմ լուսինը եւ աստղերը, որ դուն հաստատեցիր, կը մտածեմ.- Ի՞նչ է մարդը, որ կը յիշես զայն, մարդ արարածը ի՞նչ է, որ հոգածութիւն ցոյց կուտաս անոր:

Չայն քիչ մը վար դասեցիր քեզմէ, փառքով ու պատուով զայն պսակեցիր. քու բոլոր ստեղծածներուդ վերակացու կարգեցիր զայն, անոր իշխանութեան ենթարկեցիր ամէն ինչ, հօտերն ու արջառները, նաեւ բոլոր վայրի անասունները, երկնքի թռչուններն ու ծովուն ձուկերը, եւ ծովերուն մէջ լողացող բոլոր էակները: Ո՛վ ՏԵՐ, մեր Տերը,

ի՛նչ փառահեղ է անունդ ամբողջ աշխարհի վրայ:

\*\*\*\*\*

ԱՌԱԿ 4

Որդեա՛կ, լսէ՛ խօսքերս եւ գործադրէ՛ գանձը, այն ատեն պիտի երկարին ու առատանան կեանքիդ տարիները: Ես իմաստութեան սկզբունքները կը սորվեցնեմ քեզի, կը ծանօթացնեմ ուղիդ ճամբաները, որպէսզի քալած ատենդ խոչընդոտի չհանդիպիս եւ վազած ատենդ յոգնութիւն չզգաս: